

## ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԵՍ ԲԵՐՈՂ ՀԱՅԵՐԵՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ

(ըստ էղ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի»)

### Փ. Գ. ՄԵՑԹԻՍԱՆՅԱՆ

Էղ. Աղայանի բառարանի տվյալները վկայում են, որ ժամանակակից հայերենի բառապաշարի հարստացման ու կատարելագործման մի անփոխարինելի միջոց է ներքին ճանապարհը, ըստ որի լեզվում՝ արդեն հաստատապես գործող բառակազմական կաղապարներով, բառաքերականական փոխանցումների ձևով ստեղծվում են հազարավոր նոր բարդություններ, նոր բառեր: Լեզվում շարունակ ընթացող այս գործընթացում նկատելի է դառնում այն իրողությունը, որ նոր բարդություններ կերտելիս ոչ բոլոր բաղադրիչներն են միևնույն ակտիվությունը հանդես բերում: Ժամանակակից հայերենում մի քանի տասնյակից ավելի բառեր (արմատներ, արմատական բառեր) բավականին կենսունակ են: Մեծ մասամբ այդ ակտիվությունը դրսևորվում է բառակզբնային դիրքերում, առավել պակաս՝ վերջադաս կիրառությամբ:

Ժամանակակից հայերենի բառապաշարում առավել կենսունակություն ու ակտիվություն են հանդես բերում ամպ, անտառ, աստղ, արյուն, արև, բյուր, բառ, գեղ, գիտ, լեռ, լույս, ծաղիկ, կաթ, կենս, կես, կրկին, ինքն, ծանր, կանաչ, կապույտ, կարմիր, հեռ, հեռուստ, հրթիռ, ձայն, մարզ, մրց, մտ, մետաղ, ներմակ, չափ, ջերմ, ջուր, ռազմ, սառույց, սեր, սև, սպիտակ, օդ արմատներն ու արմատական բառերը բառակզբնային դրություններում, և բույժ, բույր, գետ, գիր, գործ, գերծ, կայուն, կիր, մերձ, միշ, շինարար, վառ, վաճառ, ուղի, չափ, և մի շարք այլ բաղադրիչներ՝ վերջադաս գործածությամբ:

Ակզբից ենթեցնելով, որ այս բաղադրիչներից շատերը հանդես են գալիս ներլեզվական տարբերակներով՝ կամ հնչյունափոխ և կամ առանց հնչյունափոխության: Ըստ այդմ նույն բառի սահմաններում գործուն են տարբեր բաղադրական հիմքեր, որոնցից մեկը նույնանում է կամ գրաբարյան հոլովածնի հետ, կամ ժողովրդախոսակցական ձև է, ինչպես աստղ/աստեղ, արյուն/արբն, կյանք/կենս, կես/կիս, ջուր/ջր, սառույց/սառց, սեր/սիր, լույս/լուս և այլն:

Եվ կամ ակտիվություն է հանդես բերում ոչ միայն տվյալ բառը (արմատ կամ հիմնական ձևությ), այլև դրանցով կազմված մեկ ուրիշ բառ, ինչպես՝ ամպ/ամպրոպ, արև/արեգակ, լույս/լուսին, հեռ/հեռուստ/հեռագիր/հեռախոս, օդ/օդանավ և այլն:

Այժմ ծանոթանանք այս բաղադրիչներին առանձին-առանձին:

**Ամպ/ամպրոպ**—հառարանը ներկայացնում է սրանցով կազմված շուրջ 110 բառահողված, որոնցից ավելի քան 52-ը նորակազմություններ են՝ ամպաբախյուն, ամպաբեկոր, ամպաթիռ, ամպածածկույթ, ամպակառույց, ամպահաս, ամպահույզ, ամպաճեղք, ամպամերձ, ամպաշեն, ամպաշուք, ամպարծաթել/-ում, ամպացող, ամպրոպադաշտ, ամպրոպադեզ, ամպրոպածեծ, ամպրոպակենտրոն, ամպրոպահունչ, ամպրոպանայթ, ամպրոպաշրջանցիչ, ամպրոպաշունչ, ամպրոպապաշտություն, ամպրոպացույց և այլն: Այս բառերի ճնշող մասը գործածական է գեղարվեստական ոճում, մնացածը մասնագիտական բառեր են:

Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանը» (ՀԲԲ) արձանագրել է ամպ բառով բաղադրված ընդամենը 44 գլխաբառ:

\* Էղ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի» (ԱՀԲԲ) ողջ բառամբերքը համեմատված է Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանի» հետ և կատարված է յուրաքանչյուր ակտիվ բաղադրիչով կազմված բառերի հստակ վիճակագրություն:

**Արև (արեգակ) արեգ**—Բառարանում ներկայացված է 220 բառահոդված: Խիստ ընդգծվում է **արև** բառի բառակազմական ակտիվությունը՝ ավելի քան 90 նորակազմություններ՝ գործածելի թե՛ գեղարվեստական, թե՛ գիտական ոճերում. **արևաբիծ**, **արևաբիթ**, **արևաբուծություն**, **արևագիր**, **արևադարձություն**, **արևաթափ**, **արևայուշ**, **արևախույս**, **արևածառավ**, **արևակենտրոն**, **արևակետ**, **արևակիր**, **արևակն**, **արևահամ**, **արևահեռ**, **արևահյուսակ**, **արևաճաք**, **արևաշունչ**, **արևապակ**, **արևասփյուռ**, **արևատապ**, **արևափորագրություն**, **արեվազարդել**, **արևականչ** և այլն:

Ժամանակակից հայերենում հավասարապես գործածական են **արև**-ով բաղադրված թե՛ անհոդակապ և թե՛ հոդակապով բարդ բառերը. այսպես՝ **արևտաք/արևատաք**, **արևտեճ/արևատեճ**, **արևշող/արևաշող**, որոնք կազմում են համանիշ զույգեր:

Ի տարբերություն **արև**-ի, **արեգ** և **արեգակ** բառերով բաղադրված նորակազմությունները նախ շատ սակավ են և ապա հիմնականում գեղարվեստական ոճի բառեր են՝ **արեգակնաբիթ**, **արեգակնածիր**, **արեգակնավետ**, **արեգակել**, **արեգնաթագ**, **արեգնալույս**, **արեգնամուլ**, **արեգնաջեր**:

**Արյուն/արմ**—Թեև հավասարապես կենսունակ են և **արյուն**, և **արմ** բաղադրիչները, բայց ունեն որոշակի տարբերություն ոճական տեսակետից: Այդ այն է, որ **արյուն** արմատով նորակերտ բառերը հիմնականում գիտական եզրաբառեր են՝ **արյունաքոչիչ**, **արյունաբուծություն**, **արյունազեղում**, **արյունագրկել**, **արյունացում**, **արյունալուծ**, **արյունախիտում**, **արյունածին**, **արյունահեղուկ**, **արյունահոսք**, **արյունամիզություն** և այլն, մինչդեռ **արմ** արմատի տարբերակով բաղադրված բարդությունները գործածվում են գեղարվեստական գրականության մեջ, **արմաղաշտ**, **արմաթախծոտ**, **արմալույս**, **արմածուփ**, **արմակեզ**, **արմակուտակ**, **արմահեղեղ**, **արմահոտ**, **արմանման**, **արմատառ** և այլն:

Այս բաղադրիչներով կազմված նոր բարդ բառերի թիվը հասնում է հարյուրի:

**Անտառ**—Ստ. Մալխասյանցի բառարանը տալիս է այս բառով բաղադրված ընդամենը 35 գլխաբառ: Էդ. Աղայանի բառարանում գլխաբառերի քանակը հասնում է 150-ի: Մտածել, թե այդ բառերի որոշ մասը եղել է, բայց Ստ. Մալխասյանցը չի մտնել իր բառարան, հիշտ չի լինի, որովհետև Էդ. Աղայանը արձանագրում է այն բառերը, որոնք ուղղակիորեն կապված են անտառատնտեսության և անտառատեխնիկայի զարգացման հետ, ինչպես **անտառազտություն**, **անտառակայուն**, **անտառահատիչ**, **անտառատնտեսավարություն**, **անտառարդյունաբերություն**, **անտառապահպանություն**, **անտառփորձարկում**, **անտառաքաղաք** և այլն:

Մինչդեռ Ստ. Մալխասյանցի բառարանում նշվում են **անտառ**-ով բաղադրված այն բառերը, որոնք գործածական են եղել հայերենի գրեթե բոլոր շրջաններում՝ գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար, բարբառներ: Դրանք են՝ **անտառաբնակ**, **անտառարյուր**, **անտառաձև**, **անտառազուրկ**, **անտառահավ**, **անտառաշատ**, **անտառապահ** (-ություն), **անտառաքնուուն** և այլն: Ուստի միանգամայն բնական է, որ հարյուրից ավելի նորակազմ բառեր՝ **անտառով** բաղադրված չէին կարող տեղ գտնել Մալխասյանցի մոտ: Այդ բաղադրիչով բառակազմական կաղապարները կարող են լինել թե՛ հոդակապով, թե՛ անհոդակապ. **անտառգիտական/անտառագիտական**, **անտառտնտեսություն/անտառատնտեսություն** և այլն:

**Աստղ/աստեղ**—Ընդհանրապես պետք է ասել, որ ժամանակակից հայերենում այս զուգամտության մեջ հաղթել է **աստղ** ձևը: Բառակազմական գործուն կաղապարներում իջխողը **աստղ** բառն է, ինչպես՝ **աստղակերպ**, **աստղակուտակ**, **աստղահայտք**, **աստղագոյգ**, **աստղահամար**, **աստղանյութ**, **աստղաշերտ**, **աստղագիր**, **աստղակայան**, **աստղածոր**, **աստղողել**, **աստղացանց**, **աստղուղի**, **աստղաքոչիչ** և այլն: Բառարանը արձանագրում է հարյուրից ավելի նորակազմություններ, որոնք թե՛ գիտական եզրաբառեր են, թե՛ գեղարվեստական ոճին հատուկ բարդ բառեր:

Ժամանակակից հայերենում, հատկապես վերջին տասնամյակներում ակներև է դառնում **աստեղ** ձևի (գրաբար բուն սեռական հոլովածնը) կենսունակության ակնույժ: Հետաքրքիր է այս տեսակետից նկատելի վիճակագրությունը: Ստ. Մալխասյանցը իր բառարանում ներկայացնում է **աստեղ**-ով բաղադրված 45 բառահոդված: Նույնքան գլխաբառ է տալիս նաև Էդ. Աղայանը ԱՀԲ-ում: Սակայն ի՞նչն է այստեղ էականը: Մալխասյանցի տված բառահոդվածներից ընդամենը տասներեքն է արձանագրում Էդ. Աղայանը, որոնք բոլորը ունեն «հնացած» նշումը և կամ «տես» հոլովը **աստղ**-ով կազմված բառերին: **Աստեղագաբրդ**, **աստեղալիք**, **աստեղահամ**, **աստեղաճաճանչ**, **աստեղանիշ**, **աստեղանկար** բառերը ԱՀԲ-ում կամ ունեն «հնացած» նշումը, կամ տրվում է **աստղագաբրդ**, **աստղանիշ**, **աստղանկար** ձևերը: Գործուն են միմիայն **աստեղ**-ով բաղադրված այն հեղինակային նորակազմությունները, որոնք հատուկ են գեղարվեստական լեզվին, ինչպես՝ **աստեղաբիթ**, **աստեղածով**, **աստեղահն**, **աստեղահորդ**, **աստեղամոմ**, **աստեղացայտ**, **աստեղացիր**:

Բառարանը նշում է, որ ժամանակակից հայ հեղինակների ստեղծագործություններում

հանդիպում են աստեղնային, աստեղնահյուս բառերը՝ բաղադրված աստեղնա... ձևով, որը որպես բարդություն առաջին բաղադրիչ կամ ածական հիմք սխալ ձև է ու անընդունելի:

**Բառ**—Չափազանց կենսունակ է բառ բաղադրիչը: Դժվար չէ կոսմոս, որ ստեղծված նորակազմությունները հիմնականում կլինեն լեզվաբանական եզրաբառեր. ինչպես՝ բառաբաժան, բառագրություն, բառադասություն, բառազուգորդություն, բառագործածություն, բառածանցում, բառակարգ, բառահավաք, բառահարաբերություն, բառահողված, բառաբջատում, բառապատճեն (-ել, -ում), բառարկություն, բառափոխություն, բառույթ և այլն: Հանդիպում են այլ ոճերում գործածական բառեր ևս՝ բառազեղում, բառաժայթքում, բառահյուս, բառամոլ, բառաքոս և այլն:

Ավելյանենք միայն, որ Ստ. Մալխասյանցի բառարանը Էդ. Աղայանի ԱՀԲԲ-ի 115 բառահողվածի դիմաց ունի ընդամենը 32 գլխաբառ, որը և ակներև ապացույցն է այս բաղադրիչի կենսունակության:

**Լեռ**—Այս բառով բաղադրված նորակազմությունների մի մասը հատուկ է գեղարվեստական խոսքին, մյուս մասը գիտական լեզվի բառեր են: Քիչ թիվ չեն կազմում նաև սպորտին վերաբերող բառերը: Դուրս գրված նորակազմ բառերի թիվը հասնում է շուրջ 118-ի: Դրանցից են՝ լեռնագոյացում, լեռնածալք, լեռնակազմակառուցություն, լեռնահանքանյութ, լեռնահորատում, լեռնարդյունաբերություն, լեռնօդակ, լեռնաբաշ, լեռնաբավիղ, լեռնաբուխ, լեռնաբույր, լեռնակնճիռ, լեռնամատյան, լեռնակոհակ, լեռնակցվածք, լեռնահեղեղ, լեռնաշատաշ, լեռնալեն, լեռնարշավ, լեռնարշավորդ, լեռնադահուկ, լեռնադահուկորդ, լեռնաճեղրածիգ, լեռնահրաձգային, լեռնամագլցում և այլն: Ինչպես երևում է բերված օրինակներից, քարոլություններում լեռ-ը վերականգնում է գրաբարյան և վերջահանչյունը:

**Լույս (լուս)** լուսին—Գրական ծառանգորդությամբ հասնելով մինչև մեր օրերը՝ շարունակվում է կենսունակ մնալ լույս բառի լուս հնչյունափոխ ձևը: Ստ. Մալխասյանցի բառարանը արձանագրում է լույս-ով բաղադրված այնպիսի նոր բառեր, որոնց ի հայտ գալը պայմանավորված էր գիտության առաջընթացով: Եվ լուսաբաշխ, լուսաբուծություն, լուսաչափ, լուսապատկերացույց, լուսատպություն բառերի կողքին հայտնվեցին տասնյակ այլ բառեր, որոնք արդեն իրենց հաստատումը գտան Էդ. Աղայանի բառարանում, ինչպես՝ լուսաբաշխում, լուսաբացվածք, լուսաբեկաչափ, լուսագովազդ, լուսագրություն, լուսադիմակալ, լուսադրոշմ, լուսագտիչ, լուսաթոր, լուսաժապավեն, լուսախողովակ, լուսապատճենել, լուսապարբերականություն և այլն: Նաև նշենք, որ այս նորակազմություններից շատերը բառապատճենումներ են ուսերենից, ինչպես՝ լուսագիր—светописъ, լուսաբուծություն—светопеченіе, լուսազդանշան—светофор, световой сигнал, լուսահեռագիր—фототелеграмма և այլն:

Ինչպես տեսնում ենք, նորակազմությունը բաղադրվում է լուս հնչյունափոխ ձևից, որով և դարձյալ կազմվում են գեղարվեստական խոսքին հատուկ բառեր՝ լուսագանգուր, լուսաթախիծ, լուսաթիթեռ, լուսածոր, լուսածրար, լուսակաթ, լուսակարոտ, լուսաձյունեն, լուսաշապիկ, լուսաողկույզ:

Գրեթե հիսունի են հասնում լուսին բառով կազմված նոր բաղադրությունները, որոնք հիմնականում գիտական լեզվի բառեր են. լուսնագնացություն, լուսնագունդ, լուսնագրոսանք, լուսնաթռիչք, լուսնախցիկ, լուսնածիր, լուսնակայան, լուսնակենտրոն, լուսնահանգում և այլն:

**Կաթ**—հառակազմական ակտիվություն է հանդես բերում հատկապես մասնագիտական լեզվին հատուկ բառեր ստեղծելիս: Ստ. Մալխասյանցի արձանագրած 71 բառահողվածի դիմաց ԱՀԲԲ-ն տալիս է 238 գլխաբառ, որոնց ճշող մեծամասնությունը նոր բառեր են: Այսպես՝ կաթնագիտություն, կաթնագոյացում, կաթնաթորում, կաթնալմիչ, կաթնականգ, կաթնախոհանոց, կաթնահետազոտում, կաթնանոթ, կաթնաշիճուկ, կաթնալափեսա, կաթնապրանքային, կաթնասնկախոտ, կաթնարտադրողականություն, կաթնօղի, կաթնափռչի, կաթնորակ և այլն:

**Կենս**—Եթե աստղ/աստեղ զուգածնության մեջ հաղթել է ժամանակակից աստղ ձևը, ապա կյանք/կենս ձևում այսօր գերիշխողը մնում է կենս բաղադրիչը իբրև գրաբարյան հայցական հողվածն: Այս բաղադրիչի ակտիվությունը դրսևորվում է հատկապես գիտական եզրաբառերում՝ կենսաբջիջ, կենսակայունություն, կենսահանգույց, կենսակերտվածք, կենսահեղուկ, կենսահոսանք, կենսանվազություն, կենսատարողություն, ինչպես նաև այլ ոճերի պատկանող բառեր՝ կենսապարզև, կենսակառույց, կենսավկայական, կենսապահում, կենսածիլ, կենսածոր, կենսամորոգ, կենսաձգտում, կենսավետել, կենսափոփոք, կենսուղի:

Ստ. Մալխասյանցի բառարանում արձանագրված 54 բառահողվածի դիմաց բառերի քանակը ԱՀԲԲ-ում հասնում է 130-ի: Բնական է, որ այդ ոճը պայմանավորված է կենսա-

բանական գիտության զարգացմամբ ու առաջընթացով: Նորակազմ բառերի մի մասն էլ ստեղծվում է գեղարվեստական գրականության մեջ, այլ ոճերում:

**Կես կիս**—Առավել կենսունակ է հնչյունափոխված տարբերակը: Այդ կենսունակությունը նկատվում է դեռևս Մալխասյանցի բառարանում, որն էլ ավելի ակնհայտ է դառնում Էդ. Աղայանի ԱՀԲԲ-ում: Հետաքրքիր է նաև այն, որ ժամանակակից հայերենում այս բաղադրիչով կերտված նոր բառերը վերաբերվում են ամենատարբեր ոճերի՝ գիտական, գեղարվեստական, առօրյա-խոսակցական:

**Դրանք են՝** կիսաղջիկ, կիսարողոթ, կիսադեմք, կիսաթավիշ, կիսափուտ, կիսալուգանք, կիսահանգիստ, կիսաձյունաթափ, կիսաշշուկ, կիսարդունաբերական, կիսարտադրույթ, կիսսպեռ, կիսաթղանթակազմ, կիսածածկաբույս, կիսակաթվածահարություն, կիսահոսք, կիսահրակայուն, կիսամակաբույծ, կիսամակարդեղ, կիսասովերազիծ, կիսատրոհում և այլն:

Այս արմատի բառակազմական ակտիվությունը հայերենում բացատրվում է ոուսերենի ազդեցությամբ, քանի որ կա գործոն կաղապարը՝ կիս+բազադական հիմք, ապա շատ արագ ոուսերեն բառ թարգմանվում է հայերեն: Այսպես՝ *подубархат*—կիսաթավիշ, *полублестки*—կիսաթեթև, *полупионер*—կիսաշշուկ, *полуженна*—կիսավերջնախաղ, կիսաեզրափակիչ, *полуправда*—կիսաճշմարտություն:

**Հեռ/հեռուս**—Սրանցով կազմված նոր բառերի ի հայտ գալը պայմանավորված է գիտության և տեխնիկայի զարգացման և ըստ այդմ համագործածական բառաշերտ մտած հեռախոս, հեռագիր և հեռուստացույց բառերի հետ, որոնցով էլ բաղադրվել են հարյուրավոր նորակազմություններ:

Ասվածի հաստատումն է նաև այն, որ **հեռուստ** արմատով բաղադրված ոչ մի բառ չի արձանագրում Սո. Մալխասյանցը: Էդ. Աղայանի ԱՀԲԲ-ում վերոհիշյալ արմատներով նոր բառերի քանակը հասնում է շուրջ 150-ի: Դրանցից են՝ հեռահսկողություն, հեռակառավարում, հեռադեկլարում, հեռաուրակոծիչ, հեռարձակել, հեռաշատ, հեռադիտում, հեռաթղթակից, հեռաթղանթ, հեռածավալ, հեռալուր, հեռախոսագող, հեռախոսագիրք, հեռախոսագիր, հեռախոսախցիկ, հեռախոսակայան, հեռախոսասեր, հեռախոսավճար, հեռախոսատենչ, հեռագրագիծ, հեռագրագործիչ, հեռագրակայուն, հեռագրափոխանակություն, հեռուստադիտակ, հեռուստալուսաշափ, հեռուստածրագիր, հեռուստահազորրդիչ, հեռուստատեսիլ, հեռուստացուցադրում և այլն:

**Հրթիռ**—Գիտության, հատկապես հրթիռաշինության զարգացման հետ կապված վերջին հիմնամյակում բառապաշար են մուտք գործել հրթիռ-ով բաղադրված շուրջ երկու տասնյակ նոր բառեր (ՀԲԲ-ում ընդամենը 1 բառ): Բայց դա հիմք չի տալիս մեզ այս բառը համարել նույնաստիճան ակտիվ՝ համեմատած **կենս**, **կես**, **ձեռ**, **հեռուստ** բաղադրիչների հետ, քանի որ բավականին մեղ են հրթիռ-ով բաղադրված բառերի գործածության, կիրառության շրջանակները: Կենսունակ պետք է համարել այն բաղադրիչները, որոնք լեզվի տվյալ ժամանակահատվածում ակտիվ լինելով, այդ ակտիվությունը էլ ավելի են ընդլայնում, ընդգրկում առավել տարբեր ոճեր ու ոլորտներ:

Մինչդեռ՝ հրթիռագետ, հրթիռադաշտ, հրթիռաձիգ, հրթիռահետ, հրթիռատար, հրթիռաշինություն, հրթիռատիր բառերը ունեն գործածության շատ մեղ շրջանակներ: Ըստ այդմ այս բաղադրիչի հետագա ակտիվացումը քիչ հավանական է:

**Ճայն**—Բառակազմական աշխուժություն է դրսևորում նաև այս արմատը, որով բաղադրված բառերը հիմնականում գիտական եզրաբառեր են՝ Ճայնադաշտ, Ճայնադարան, Ճայնագորացում, Ճայնախլացուցիչ, Ճայնախափանիչ, Ճայնակարգիչ, Ճայնակլանիչ, Ճայնահաղորդականություն, Ճայնահաճախականություն, Ճայնամարզություն, Ճայնամեկուսացում, Ճայնաշոթա, Ճայնաշրջություն, Ճայնասահման, Ճայնավերաբառադրիչ, Ճայնատարողություն, Ճայնափոխադրիչ, Ճայնաքողարկում, Ճայնեղուտ, Ճայներիզ, Ճայնընկալ, Ճայնորսիչ և այլն:

**Մարզ**, **մրց**—Ժամանակակից հայերենում բավականին աշխույծ են նաև այս բաղադրիչները, որոնցով կերտվում են սպորտին հատուկ բառեր ու տերմիններ: Սրանցով կազմված նոր բառերից են՝ մարզաբակ, մարզագիծ, մարզադաշտ, մարզախաղ, մարզակառույց, մարզակույր, մարզահագուստ, մարզահանդես, մարզաձող, մարզավիճակ, մարզավարժություն, մարզատոն. մրցահատված, մրցաշրջագայություն, մրցաոճ, մրցասկիզբ, մրցատարածություն, մրցասկիզբ, մրցեղույթ, մրցուղերթ, մրցագորգ, մրցաերթ, մրցակարգ, մրցահրապարակ:

Եվ քանի որ այս երկու բաղադրիչները ընդհանրանում են իմաստային ոլորտում, ուստի կազմված բարդություններից շատերն էլ հոմանիշ են, և մեկը կարող է գործածվել մյուսի փոխարեն: Այսպես՝ գրական հայերենում կիրառվում է թե՛ մարզագորգը, թե՛ մրցագորգը, թե՛ մրցասպարեզը, թե՛ մարզասպարեզը և այլն:

**Ջերմ**—Էդ. Աղայանը իր բառարանում արձանագրում է այս բաղադրիչով կազմված 228

խառ, որոնցից ավելի քան 127-ը չկա Ստ. Մալխասյանցի ՀԲԲ-ում: Դրանք նորակազմություններ են և հաստիկ են հիմնականում գիտական բառապաշարին, ինչպես՝ ջերմախողովակ, ջերմակարգավորիչ, ջերմաստիճանային, ջերմակառուցված, ջերմակարողություն, ջերմահողաշերտ, ջերմակորիզային, ջերմակտրիչ, ջերմաշարժիչ, ջերմաշիթ, ջերմատարր, ջերմաբազմապատկիչ, ջերմադադար և այլն:

**Ջուր/ջր**—Ժամանակակից հայերենում նոր բառեր կերտելիս առաջնությունը պատկանում է ջր հնչյունափոխ ձևին, որը հիմնականում մասնագիտական բառապաշարին հատուկ բառեր է կազմում: Այդ բառերի թիվը շատ է Ստ. Մալխասյանցի բառարանում, առավել ևս ԱՀԲԲ-ում. ջրանկյում, ջրանցույց, ջրահատիչ, ջրահեղուկ, ջրահեռացում, ջրահոսանք, ջրամաս, ջրամարզանք, ջրամղիչ, ջրամշակել, ջրանետ, ջրանիշ, ջրատնկարան, ջրաշփափոցիչ, ջրապտույտել, ջրասուզագցեստ, ջրավիժանք, ջրաքերածո, ջրադիմացկունություն, ջրաերկրաբանություն, ջրազանգված, ջրաթափ, ջրակառուցում, ջրածծունակ, ջրակարգավորիչ, ջրահավաքում և տասնյակ այլ բառեր: Վերջապես դիրքում հանդես է գալիս ջուր ձևը՝ գաթեջուր, ամենակշուր, աղբյուրաջուր, վարդաջուր և այլն:

Օդ օդանավ—Արտակարգ կենսունակություն ցուցաբերող բաղադրիչ է օդ-ը, որով բաղադրված ընդամենը 100 գլխաբառի դիմաց (ՀԲԲ) էդ. Աղայանի բառարանը տալիս է 164 միայն նոր բառ: Ավելի քան քսան նոր բառ ժամանակակից հայերենում կազմված են օդանավ բաղադրիչով՝ այն դեպքում, երբ Մալխասյանը արձանագրում է միմիայն օդանավ-ը, օդանավորդ-ը, օդանավակայան-ը: Գիտության զարգացմամբ պայմանավորված էլ այդ բառերը գրեթե առանց վերապահության մասնագիտական բառեր են. օդաբաշխիչ, օդաբուժարան, օդազլան, օդադարձ, օդազանգված, օդաթափանցելի, օդալուսանկար, օդախողովակ, օդախցիկ, օդակլանում, օդահանոց, օդահարթակ, օդաննչական, օդամորճ, օդապահիչ, օդափշում, օդաքայլ, օդաերևութագրություն, օդընդունարան, օդընտելարան, օդուղեկից, օդուռուցք և այլն:

Օդանավ-ով են բաղադրված օդանավագծող, օդանավագծորդ, օդանավագործարան, օդանավակիր, օդանավաչենք, օդանավափարոս և այլ բաղադրություններ:

Վերը շարադրված բաղադրիչներից՝ արմատներից ու հիմնական ձևայիններից բացի, գրական հայերենում որոշ չափով կենսունակություն են դրսևորում նաև ծաղիկ, ռազմ, սառույց (սառց), չափ, գիտ, ճառագայթ, սեր (սիր), մետաղ, մարմար, աշխատ, կաղամբ արմատներն ու արմատական բառերը: Սրանցից յուրաքանչյուրը գրական հայերենում հիմք է հանդիսացել ամենաքիչ երկու տասնյակից ավելի նորակերտ բառերի ստեղծման, ինչպես՝ աշխատ սնաստոց, աշխատածավալ, աշխատապարզև, աշխատատար, գիտաշխատող, գիտատեղեկատու, գիտավորձ, գիտափորձառական, ծաղկաբշտիկ, ծաղկագրություն, ծաղկածուլ, ծաղկանոշ, ծաղկաշաղախ, ծաղկաշինուկ, ծաղկաշրջապարդ, ծաղկապատկեր, ծաղկացանկ, կաղամբաթթու, կաղամբահոտ, կաղամբացան, ճառագայթաբեկում, ճառագայթադիտում, ճառագայթագոտի, ճառագայթալույս, մետաղազանգված, մետաղաթել, մետաղակերտվածք, մետաղակտրիչ, մետաղահալ, մետաղատար, մետաղասողոց, չափագործիք, չափամբնացորդ, չափանոթ, չափարշավ, չափորոշել, ռազմարդյունաբերություն, ռազմագեղանկարչություն, ռազմավարոցանակ, ռազմածարավ, ռազմակցորդ, ռազմածիշ, ռազմահաշմանդամ, ռազմերգել, ռազմանակ, սառցահոսք, սառցահոսանք, սառցածյուն, սառցամշուշ, սառցափշուշվածք, սիրահրապույր, սիրադիմացկուն, սիրաթափ, սիրախանդ, սիրակապույտ, սիրամերցորդ, սիրաշունչ, սիրաթափվել, սիրատար և այլն:

Բնականական ակտիվություն են դրսևորում նաև գեղ, քյուր, ծանր անկանները, գույների անվանումները՝ կանաչ, կապույտ, սև, սպիտակ, ճերմակ, կարմիր, որոշ մակբայներ կրկն, միշտ: Այս բաղադրիչների հիմնական առանձնահատկությունը թերևս այն է, որ բաղադրված նորակազմությունները գեղարվեստական ոճին պատկանող բառեր են: Այսպես՝ բյուրաբերդ, բյուրագիծ, բյուրախոհ, բյուրադքյուր, բյուրալիք, բյուրարեզակ, բյուրացան, գեղաբաշ, գեղազգայնական, գեղաթաթիչ, գեղածավալ, գեղակառույց, գեղահարմարություն, գեղանորբ, գեղաշարս, գեղատառ, ծանրագարդ, ծանրալուրջ, ծանրակառք, ծանրահում, ծանրամարդ, ծանրաճ, ծանրավիշտ, ծանրաշեշտ, ծանրույթ, կրկնաբյուրեղ, կրկնածար, կրկնակամար, կրկնադարձ, կրկնաթոր, կրկնամրցավազք, մշտագյուտ, մշտազայություն, մշտաթափառ, մշտահանգել, մշտախափարում, մշտաճառագայթ, մշտածյուն, մշտամշուշ, մշտամուր, մշտափրփուր, կարմրուշողաթև, կարմրալույս, կարմրածոր, կարմրածուխ, կարմրակազմ, կարմրաշապ, կարմրափայտե, կարմրասող, կանաչագարդություն, կանաչավարս, կանաչերանգ, կանաչերիզ. կապտաբանկոն, կապտաթերթիկ, կապտաթուր, կապտածավալ, կապտաանջ, կապտահեղեղ, կապտամաշկություն, կապտաներկ, կապտաշունչ, կապտուկ և այլն: Կապտաճեղ, կապտացուր, ճերմակաբոց, ճերմակածեփ, ճերմակածոց, ճերմակահատ, ճերմակազարիկ, ճերմակաշար, սևաբուրգ, սևագույր, սևագիշեր, սևադաշտ,

սեռածածկել, սեռախորհուրդ, սեռամաշկություն, սպիտակազանգ, սպիտակաթորանք, սպիտակաթորանք, սպիտակաթորանք, սպիտակաթորանք, սպիտակաթորանք, սպիտակաթորանք:

Գույների անվանումները՝ կարմիր, կապույտ, սև, սպիտակ, ճերմակ, ակտիվ բաղադրիչ են դատում մեկ այլ երանգներ, գույներ բնորոշող նորակազմությունների մեջ, ինչպես՝ կարմրադեղնավուն, կարմրամանուշակագույն, կարմրամոխրագույն, կարմրամարնազագույն, կարմրաշագանակագույն, կանաչագորշագույն, կանաչադեղնավուն, կապտաերկնագույն, կապտադարչնագույն, կապտաճերմակ, կապտամանուշակագույն, ճերմակագորշ, սեռակապույտ, սպիտակավարդագույն և այլն: Կանաչ ածականը ակտիվություն է դրսևորում մեկ կայուն բառակապակցություններ կերտելիս, ինչպես՝ կանաչ գոտի, կանաչ դաշտ, կանաչ ցանկապատ, կանաչ փողոց:

Նոր գրական հայերենում գեղարվեստական ոճի պատկանող այս նորակերտ բառերի որոշ մասը հեղինակային նորակազմություններ են: Ուստի և էդ. Աղայանը ԱՀԲԲ-ում շատ հաճախ չի մոտանում մշել հեղինակին և քերում է համապատասխան օրինակը.

Այսպես՝ բացատրելով բյուրաբերդ բառը, տրվում է մեկ առաջին գործածությունը.

**«Եվ տեսներ... Վանա ծովից մինչև Սևան**

**Հայաստանն է բյուրաբերդ»:**

(Հովհ. Ծիրազ)

Կամ՝ սիրադուլ բառը.

**«Ներսս հացադուլ է հայտարարել հիմա, ու սիրադուլ սիրտս»:**

(Պ. Սևակ)

Եվ կամ՝ կապտաշշուկ բառը.

**«Մտերմության կարոտները թեալոր**

**Մախրում էին կապտաշշուկ եթերում»:**

(Ռ. Դավոյան)

Ժամանակակից գրական հայերենում բառակազմական ակտիվություն են հանդես բերում մեկ մի շարք բաղադրիչներ (արմատներ, արմատական բառեր) վերջադաս գործածությամբ: Դրանք են՝ -բույծ, -բույր, -գիր, -գետ, -գիծ, -կայուն, -կիր, -գերծ, -մերծ, -միշ, -շերտ, -շինարար, -չափ, -տար, -վար, -վաճառ, -ուղի և այլն: Այս բաղադրիչներով բաղադրված նորակազմությունների ստվար մասը հայերենի ներքին օրենքներին հատուկ բարդություններ են, որոշ մասը՝ բառապատճենումներ: Այս բաղադրիչներով կազմված բարդությունների որոշ մասն էլ ավելի հաճախ հանդես են գալիս ածանցմամբ, ինչպես՝ չափագիր, չափագրել, չափագրում, օղագիծ, օղագծել, աղագերծ, աղագերծել, աղագերծում, վարակագերծ, վարակագերծելի, վարակագերծում և այլն: Վերջադաս դիրքերում բառակազմական ակտիվություն հանդես բերող բաղադրիչներով են կազմվել նյարդաբույծ, վիրաբույծ, կապտագիր, հեռագրագիր, ծաղկագիր, ձայնագիր, չափագիր, օղագիծ, չափագիծ, լեռնաբույր, կաթնաբույր, գեղաբույր, անտառաբույր, ակնագերծ, սողագերծ, խոնավագերծ, միջուկագերծ, ախտագերծ, հրթիռագետ, ռազմագետ, էլեկտրահրակայուն, հրակայուն, չորակայուն, ջերմակայուն, ալիքատար, մետաղատար, աշխատատար, ապրանքատար, հոսանքատար, բեռնատար, ածխակիր, խողովակատար, բացիակիր, բետոնակիր, գավաթակիր, գրահակիր, լուսակիր, հրթիռակիր, անտառաշերտ, ջրաշերտ, մետաղաշերտ, ճերմակաշերտ, ճանապարհաշինարար, վերելակաշինարար, գազաշինարար և այլ բառեր:

Ինչպես նկատելի է վերը շարադրվածից, առաջադաս և վերջադաս ակտիվություն հանդես բերող բաղադրիչների միջև հավասարության մշան դնել չի կարելի: Եվ դա քննական է: Եթե առաջադաս դիրքում կենսունակ որևէ բառով ստեղծվել են ամենապակասը քան-երեսուն բարդություններ, ապա վերջադաս դիրքում կենսունակ ցանկացած բաղադրիչով կազմվել է ընդամենը առավելագույնը տասնհինգից-քսան բառ:

Բայց մեկ առաջադաս գործածության դեպքերում ոչ բոլոր բաղադրիչներն են հավասարապես ակտիվ: Դրանք անպայմանորեն բաժանվում են երկու խմբի.

1) Բառեր (արմատներ), որոնք լեզվի տվյալ ժամանակահատվածում գործում են ու կենսունակ, և այդ բառակազմական ակտիվությունը գնալով ընդարձակվում ու ծավալվում է: Բնական է, որ դրանք կլինեն այն բաղադրիչները, որոնցով ստեղծված նորակազմ բառերը պատկանում են լեզվի ամենատարբեր ոճերին՝ գիտական, գեղարվեստական, առօրյա խոսակցական և կիրառվում են տարբեր ոլորտներում:

2) Բառեր (արմատներ), որոնք լեզվի տվյալ ժամանակահատվածում ակտիվ են, սակայն ծավալվելու հակում մույն կենսունակությամբ չեն դրսևորում: Այսպես՝ չնայած կաղամբ, մարմար, հրթիռ և այլ մի քանի բառերով 20-րդ դարի 40-ական թվականներից ի վեր ստեղծվել են բազմաթիվ նորակազմություններ (կաղամբով՝ 18 բառ, հրթիռով՝ 18 բառ,

մարմարով՝ 85 բառ), այսուհանդերձ դրանք նեղ, մասնագիտական բնագավառներին հատուկ բառեր են: Եվ այդ ակտիվությունը, արդեն իսկ իրեն սպառել է: Իհարկե, չի կարելի ընդունել սա անվերապահորեն: Անշուշտ այս և նման բաղադրիչներով կկազմվեն նոր բառեր: Բայց դրանք արդեն կլինեն հատուկենտ, լեզվի զարգացման բնականոն գործընթացին համարժեք: Ինչ խոսք, որ ծավալվելու հակում կդրսևորեն **ամպ, արև, արյուն, աստղ, լեռ բառերը**, որոնցով բաղադրված բարդությունները պատկանում են ամենատարբեր ոճերի:

Միայն բերենք **լեռ** բառի օրինակը: Սրանով ժամանակակից հայերենում կազմվել են բարդ և բարդ անանցավոր բառեր՝ սպորտի բնագավառին հատուկ՝ լեռնադաճուկ (-ային, -ավոր), լեռնագրոսանք, լեռնահրաձիգ, լեռնարշավ, գիտական բնագավառում գործածական՝ լեռնագիծ, լեռնագոյացում, լեռնակազմակառուցություն, լեռնաքիմիական, լեռնահանք (-ային, -անյութ), լեռնահետազոտություն (-ական), լեռնարդյունաբերություն, գեղարվեստական խոսքին հատուկ՝ լեռնաբաշ, լեռնարուխ, լեռնարույր, լեռնադուստր, լեռնաթիկունք, լեռնածիծ, լեռնածիր, լեռնել, լեռնակապույտ, լեռնակարկաչ, լեռնակոճակ, լեռնահառս, լեռնամեղեղ և այլն:

Այսպիսով ժամանակակից հայերենում նոր բառեր կերտելու գործընթացում քաղական ակտիվություն, կենսունակություն են հանդես բերում որոշակի թվով բառեր ու արմատներ՝ թե՛ սուսադաս և թե՛ վերջադաս դիրքերում: Այդ նորաստեղծ բառերը պատկանում են լեզվի ամենատարբեր ոճերին՝ գիտական, գեղարվեստական, առօրյա-խոսակցական, գործածվում են ամենատարբեր յուրրաներում, որը անշուշտ պայմանավորված է մի կողմից գիտության, տեխնիկայի զարգացմամբ, նորանոր հասկացությունների, երևույթների, առարկաների առաջացման, անվանման անհրաժեշտությամբ, մյուս կողմից՝ կյանքի թելադրանքով ու լեզվի բնականոն զարգացմամբ:

Ստեղծված այս նորակազմությունների հսկայական մասը հայերենի ներքին բառակազմության օրենքներին հարազատ, գործուն կաղապարներով բաղադրված բարդություններ են: Որոշ մասն էլ հիմնականում գիտական եզրաբառեր, բառ-պատճենումներ են՝ ռուսերենի ազդեցությամբ:

Չնայած այս որոշակի սահմանազատմանը, դրանք երկուսն էլ ժամանակակից հայերենին խիստ բնութագրական, մեր լեզվի բառային կազմը նորացնող, հարստացնող գործուն օրինաչափություններ են:

II. Г. МЕЙТИХАНИИ—Проявляющие словообразовательную активность армянские компоненты по «Толковому словарю современного армянского языка». Э. Агамян.—В статье на основе сравнительного анализа изучаются те армянские слова и корни, которые на нынешнем этапе проявляют активность, составляя большое количество новых слов. Богатый фактический материал дает возможность различать эти компоненты в зависимости от сферы функционирования.